ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ծաղկաձոր **09/09/2025**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:

Բացակա էին՝ Նարեկ Հարությունյանը, Հովիկ Գոգոլյանը, Մերուժան Հովհաննիսյանը, Գրիգոր Ղարիբյանը, Արթուր Մելոյանը, Հմայակ Խաչատրյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Ռիմա Մանուկյան, Գոռ Առաքելյան, Գարիկ Գեվորգյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Ոսկան Եղիազարյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գարիկ Բաղայանը

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 09-Ի ԹԻՎ 9 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 8-րդ նստաշրջանի 2025 թվականի սեպտեմբերի 09-ի թիվ 9 հերթական նիստի օրակարգը՝

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի N 169-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մազի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքերը անժամկետ և անհատույց օգտագործման տրամադրելու մասին.

3) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր գյուղում փողոց անվանակոչելու մասին.

4) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով որպես ընդլայնում օտարելու մասին.

5) Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին.

6) Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին.

7) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022թվականի սեպտեմբերի 26 -ի N 143 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

8) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26 -ի N 150 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

9) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը մրցութային կարգով վարձակալության իրավունքով տրամադրելու մասին.

10) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին.

11) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին.

12) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Հանքավան գյուղի 5-րդ փողոցի մաքրման և բարեկարգման մասին.

13) Բազմաֆունկցիոնալ հյուրանոցային համալիրի կառուցման աշխատանքներ իրականացնելու նախնական համաձայնություն տալու մասին

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 92)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 169-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. <u>ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ</u>)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 169-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
1) Տող 1261 - Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) «112963.4» թիվը փոխարինել «491769,4» թվով:
2) Տող 1112 - Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար «19500,0» թիվը փոխարինել «69000,0» թվով:
3) Բաժին 1 խումբ 1 դաս 1 (Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում «4823» (Պարտադիր վճարներ) «500,0» թիվը փոխարինել «1000,0» թվով:
4) Բաժին 1 խումբ 6 դաս 1 (Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)) հոդված «5411» (Հող) «0,0» թիվը փոխարինել «128100,0» թվով:
5) Բաժին 4 խումբ 5 դաս 1 (ճանապարհային տրանսպորտ) հոդված «5112» (Շենքերի և շինությունների կառուցում) «221870,9» թիվը փոխարինել «472576,9» թվով:
6) Բաժին 6 խումբ 3 դաս 1 (Զրամատակարարում) հոդված «5112» (Շենքերի և շինությունների կառուցում) «500000.0» թիվը փոխարինել «470000.0» թվով:
7) Բաժին 6 խումբ 3 դաս 1 (Զրամատակարարում) հոդված «5113» (Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) «50000.0» թիվը փոխարինել «80000.0» թվով:
8) Բաժին 8 խումբ 2 դաս 4 (Այլ մշակութային կազմակերպություններ) հոդված «4239» (Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) «40000,0» թիվը փոխարինել «88000,0» թվով:
9) Բաժին 8 խումբ 4 դաս 2 (Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ) հոդված «4819» (Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին) «1700,0» թիվը փոխարինել «2700,0» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 93-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԵՐԸ ԱՆԺԱՄԿԵՏ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքը անժամկետ և անհատույց օգտագործման տրամադրել « Ծաղկաձոր քաղաքի մանկական արվեստի դպրոց » համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն հավելված 1:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքը անժամկետ և անհատույց օգտագործման տրամադրել Ծաղկաձոր համայնքի « Մեղրաձոր գյուղի Սամվել Մուրադյանի անվան մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ հավելված 2:

3. Հայաստանի Հանարապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքը անժամկետ և անհատույց օգտագործման տրամադրել « Աղավնաձոր գյուղի նախադպրոցական ուսումնական հաստատություն » համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն հավելված 3:

4. Հայաստանի Հանարապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքը անժամկետ և անհատույց օգտագործման տրամադրել « Արտավազ գյուղի նախադրոցական ուսումնական հաստատություն » համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն հավելված 4:

5. Հայաստանի Հանարապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքը անժամկետ և անհատույց օգտագործման տրամադրել « Մեղրաձոր գյուղի նախադրոցական ուսումնական հաստատություն » համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն հավելված 5:

6. Հայաստանի Հանարապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքը անժամկետ և անհատույց օգտագործման տրամադրել « Ծաղկաձոր քաղաքի նախադրոցական ուսումնական հաստատություն » համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն հավելված 6:

7. Հայաստանի Հանարապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքը անժամկետ և անհատույց օգտագործման տրամադրել « Ծաղկաձորի կոմունալ տնտեսություն » համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն հավելված 7, 8:

8. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքը անժամկետ և անհատույց օգտագործման տրամադրել Մեղրաձոր գյուղի « Արծափ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն հավելված 9:

9. Համայնքի ղեկավարի հետ կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:

10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 94)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՂՐԱՁՈՐ ԳՅՈՒՂՈՒՄ ՓՈՂՈՑՆԵՐԸ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29 -ի թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի որոշման քաղվածքը՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ծաղկաձոր համայնք գյուղ Մեղրաձոր 11-րդ փողոցի, ձախակողմյան հատվածում գտնվող նրբանցքը անվանակոչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ծաղկաձոր համայնք գյուղ Մեղրաձոր 11-րդ փողոց, 3-րդ նրբանցք՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 95)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՈՐՊԵՍ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի, 2-րդ, 6-րդ և 7-րդ ենթակետերով և հիմք ընդունելով Սուրեն Հենրիկի Խաչատրյանի դիմումը

1. Սուրեն Հենրիկի Խաչատրյանին ուղղակի վաճառքով՝ որպես ընդլայնում օտարել իրեն սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, Ծաղկաձոր քաղաքի Խ. կեչառեցու փողոց 17/1 հասցեում գտնվող 0,0168 հա (կադաստրային ծածկագիր՝ 07-005-0008-0330, վկայական N 27092023-07-0201) մակերեսով բնակավայրերի, հասարակական կառուցապատման հողամասին կից՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր Խ. Կեչառեցու 17/2 հասցեում գտնվող 0,00073 հա (կադաստրային ծածկագիր՝ 07-005-0008-0196, վկայական 28072025-07-0193), մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող՝բնակավայրերի, հասարակական կառուցապատման համար նախատեսված՝ նպատակային և գործառնական նշանակության հողամասը:
2. Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով ՝ 118090 (մեկ հարյուր տասնութ հազար իննսուն) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Հողամասի օտարումը իրականացնել սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 96)*

ԼՍԵՑԻՆ

ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշումը՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Մեղրաձոր գյուղի վարչական տարածքում գտնվող, 0,36747 հա /ծածկագիր 07-045-00385-0011 / մակերեսով գյուղատնտեսական, վարելահող հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 97)*

ԼՍԵՑԻՆ

ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշումը՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, Ծաղկաձոր քաղաք Նոր թաղամաս 3-րդ փողոց, 25/2 հասեում գտնվող, 0,00578 հա (ծածկագիր 07-005-0016-0227) մակերեսով բնակավայրերի, բնակելի կառուցապատման հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 98)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26 -Ի N 143 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի «Աղավնաձոր գյուղի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հիմնադրելու և կանոնադրությունը հաստատելու մասին» N 143 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշման 2-րդ կետով հաստատված «Աղավնաձոր գյուղի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը» շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 99)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N150 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի «Արծափ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 150 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 100)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին»օրենքի 18-րդ հոդվածի, 1-ին մասի 21-րդ կետի և պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

1.Թույլատրել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը տրամադրել մրցութային կարգով վարձակալության իրավունքով 25 (քսանհինգ) տարի ժամկետով՝ առանց կառուցապատման:
2. Սահմանել մրցութային կարգով վարձակալության իրավունքով տրամադրվող հողամասի համար տարեկան վարձաչափ՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 101)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով,Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման պահանջներով՝

1. Վարդան Վրեժի Ջհանգիրյանին ուղղակի վաճառքով օտարել Համայնքային սեփականություն հանդիսացող,Հայաստանի Հանրապետության,Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, գյուղ Մեղրաձոր թիվ 24/2 հասցեում գտնվող, (վկայական N01042025-07-0104,
կադաստրային ծածկագիր 07-045-0549-0008) Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին չդասվող, էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, էներգետիկայի համար նախատեսված՝

նպատակային և գործառնական նշանակության 0,211 հա մակերեսով հողամասը՝ 3 961947 (երեք միլիոն ինը հարյուր վաթսուն մեկ հազար ինը հարյուր քառասուն յոթ) Հայաստանի Հանրապետության դրամով :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-1 Դեմ-7 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 102)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով,Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման պահանջներով

1. Վարդան Վրեժի Ջհանգիրյանինուղղակի վաճառքով օտարել համայնքային սեփականություն հանդիսացող, Հայաստանի Հանրապետության,Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, գյուղ Մեղրաձոր թիվ 24/1 հասցեում գտնվող, (վկայական N19042025-07--0008, կադաստրային ծածկագիր 07-045-0549-0007) Հողային օրենսգրքի 60-րդ
հոդվածով սահմանված հողամասերի շարքին չդասվող, էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, էներգետիկայի համար նախատեսված՝ նպատակային և գործառնական նշանակության 0,15 հա մակերեսով հողամասը՝ 2 816 550 (երկու միլիոն ութ հարյուր տասնվեց հազար հինգ հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամով :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-1 Դեմ-8 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 103)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՆՔԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑԻ ՄԱՔՐՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով և հիմք ընդունելով Հանքավան բնակավայրի վարչական ղեկավար՝ Արծրուն Գևորգյանի զեկուցագիրը

1. Տալ համաձայնություն կատարելու՝ Հայաստանի Հանրապետության Ծաղկաձոր համայնքի Հանքավան գյուղի 5-րդ փողոցի երկայնքով աճող թվով 40 հատ կաղնի և այլ տեսակի ծառերի կտրման, թփերի մաքրման և ճանապարհի բարեկարգման աշխատանքներ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-4 Դեմ-2 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 104)*

ԼՍԵՑԻՆ

ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ և 6-րդ մասերի, հիմք ընդունելով 2025 թվականի օգոստոսի 27-ին կայացած հանրային լսումների արձանագրությունը՝

1.Տալ նախնական համաձայնություն « ՏԱՆԱԱՏ » սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Ծաղկաձոր համայնքի ք. Ծաղկաձոր, Անտառային 1, թաղամաս 11 հասցեում բազմաֆունկցիոնալ հյուրանոցային համալիրի կառուցման աշխատանքներ իրականացնելու համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-3 Դեմ-5 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 105)*

Ավագանու անդամներ

ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԳՈՀԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

ՅՈՒՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ԲԱԲԱՅԱՆ

ՆՈՒՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ՍԱՖԱՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Գարիկ Բաղալյանը